Արձանագրություն N 2

ՀՀ Արագածոտնի մարզի Կարբիի համայնքապետարանի կարիքների համար «ՀՀԱՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-21/06» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի մասին

Գ.Կարբի **«06» Հուլիսի 2021թ.**
Ժամը՝ 14:30

Մասնակցում էին՝

Գնահատող Հանձնաժողովի նախագահ՝	**Ռոլանդ Հակոբյան**–Կարբի համայնքի ղեկավարի տեղակալ
Հանձնաժողովի անդամներ՝	**Զոհրակ Ամիրյան – Կարբիի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար** **Մխիթար Հայրապետյան- Կարբիի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ** **ԴավիթՆանյան-<<Կարբի համայնքի կոմունալ ծառայություն>> ՀՈԱԿ-ի տնօրեն**
Գնումները համակարգող՝	**Արա Բաղդասարյան**

Օրակարգ

հայտերի բացման և գնահատման նիստի մասին

1.Գնման առարկայի նախահաշվայի գինը

ՀՀ Արագածոտնի մարզի Կարբի համայնքի կարիքների համար հայտարարված **ՀՀԱՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-21/06** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի նախահաշվային գինը կազմում է

ՀՀ դրամ

1	**Կարբի համայնքի «ԱՅ-ԹԻ դպրոց և ուսուցման կենտրոնի մասնաշենքի հիմնանորոգման աշխատանքներ**	

2. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

ՀՀ Արագածոտնի մարզի **Կարբիի համայնքապետարանի** կարիքների համար կազմակերպված **ՀՀԱՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-21/06** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հայտ են ներկայացրել

Մասնակցի անվանումը	Գտնվելու վայրը և էլեկտրոնային հասցեն
«Քիմպաշտպանություն» ՍՊԸ	ՀՀ ք.Երևան 0037 Նազարբեկյան 18/2 հեռ 055112226 e:mail chemprotect@mail.ru
«Լուսի-Արեգ» ՍՊԸ	ՀՀ ք. Երևան Շիրակի 82 Հեռ՝ 098404128 E-mail: lusiareg40@mail.ru

3. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

Մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ – 0

4. **Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.**

4.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը բացառությամբ հետևալ դեպքերի՝

«Քիմպաշտպանություն» ՍՊԸ–ի կողմից ընթացակարգին ներկայացված հայտով չի ներկայացվել ընթացակարգի հրավերի վերոնշյալ կետով սահմանված թերի է ներկայացվել Հավելված 1.1-ը :

Սույն ընթացակարգի հրավերի 4.3 կետով սահմանված է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ **շինարարական աշխատանքների գնման դեպքում՝**

- իր կողմից առաջարկվող՝ սույն հրավերին կցված նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխանող սարքերի և սարքավորումների տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները, արտադրողները և երաշխիքային ժամկետները.

«Քիմպաշտպանություն» ՍՊԸ -ի կողմից ընթացակարգին ներկայացված հայտով չի ներկայացվել Կարգի և ընթացակարգի հրավերի վերոնշյալ կետով սահմանված չի ներկայացվել ծավալաթերթ-նախահաշիվը :

Սույն ընթացակարգի հրավերի 4.3 կետով սահմանված է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ **շինարարական աշխատանքների գնման դեպքում՝**

- իր կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվ, հաշվի առնելով սույն հրավերին կցված ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները: Ընդ որում կշիռները կիրառվում են մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի նկատմամբ, նկատի ունենալով, որ շեղումը չի կարող ավել կամ պակաս լինել սույն հրավերին կցված ծավալաթերթով տվյալ բաժնի համար սահմանված կշռի չափի տաս տոկոսից: Աշխատանքների բաժինները չեն կարող արհեստականորեն միավորվել կամ առանձնացվել:

-« Լուսի-Արեգ » ՍՊԸ –ի կողմից ընթացակարգին ներկայացված հայտով չի ներկայացվել Կարգի և ընթացակարգի հրավերի վերոնշյալ կետով սահմանված թերի է ներկայացվել Հավելված 1.1-ը :

Սույն ընթացակարգի հրավերի 4.3 կետով սահմանված է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ **շինարարական՝աշխատանքների գնման դեպքում՝**

- իր կողմից առաջարկվող՝ սույն հրավերին կցված նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխանող սարքերի և սարքավորումների տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները, արտադրողները և երաշխիքային ժամկետները.

Հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը՝ հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և առաջարկում է մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունը՝ ընդ որում պահանջվող /շտկված/ փաստաթուղթն՝ բնօրինակ կամ սկանավորած տարբերակով (agnumner@mail.ru, artyomgevorgyan8@mail.ru) անհրաժեշտ է մինչև կասեցման ժամկետի ավարտը /**08.07.2021թ. ժամը 18:00**/ ներկայացնել « ***ՀՀԱՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-21/06***» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարին՝ Ա.Բաղդասարյանին, գյուղ Կարբի 3-րդ փողոց թիվ 1 վարչական շենք հասցեով:

4.2 Մասնակիցների ներկայացրած հայտերում ներառված փաստաթղթերը համապատասխանում են հրավերի պահանջներին մասնավորապես՝

09.07.2021թ-ի ժամը 18:00-ի դրությամբ «Քիմպաշտպանություն» ՍՊԸ –ն և « Լուսի-Արեգ» ՍՊԸ –ն, շտկումները ներկայացրել են էլեկտրոնային փոստի միջոցով, և բնօրինակ տարբերակով:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ – 0

5. **Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.**

Մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Մասնակցի անվանումը	ինքնարժեքի և շահույթի հանրագումար	ԱԱՀ	Առաջարկված ընդհանուր գին
«Քիմպաշտպանություն» ՍՊԸ	25567500	5113500	30681000
«Լուսի-Արեգ» ՍՊԸ	25441142	5088228	30529370

*6.**Չկայացած չափաբաժինների վերաբերյալ:***

Չկայացած չափաբաժիններ չեն եղել:

Ընդունվել է որոշում՝ կողմ -4 դեմ – 0

*7.**Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:***

Ընդունվել է որոշում՝ կողմ -4, դեմ – 0

8. Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.

8.1 09.07.2021թ կայացած նիստում ՀՀ Արագածոտնի մարզի Կարբիի համայնքապետարանի կարիքների համար կազմակերպված «**ՀՀԱՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-21/06**» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի և սույն ընթացակարգի հրավերի 8.5 կետերի պահանջները, առաջարկում ենք Ձեզ **14.07.2021թ.-ի ժամը 12:30-ին** ներկայանալ **ՀՀ Արագածոտնի մարզի Կարբի համայնքապետարան** գյուղ Կարբի 3-րդ փողոց թիվ 1 հասցեում կազմակերպված **միաժամանակյա** 15 րոպե տևողությամբ բանակցություններին:

Բանակցությանը ներկա գտնվելու համար անհրաժեշտ է վերը նշված ժամկետին ներկայանալ համայնքապետարան: Լիազորված անձանց մասնակցության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել սահմանված կարգով հաստատված լիազորագիր և անձնագրի պատճեն, իսկ տնօրենի դեպքում՝ անձնագրի պատճեն:

8.2 Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ոչ ուշ քան Բանակցությունների վարման օրվան հաջորդ աշխատանքային օրը ժամը 15:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ -4, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ **Ռոլանդ Հակոբյան**

հանձնաժողովի անդամներ՝ **Զոհրակ Ամիրյան**

Դավիթ Նանյան

Մխիթար Հայրապետյան

Գնումները համակարգող՝ **Արա Բաղդասարյան**